**469. ՏԱՊԱՆԱՔԱՐ**. 7 տող.



ԱՅՍ Է ՀԱՆ-
ԳԻՍՏ ԲԱ-
ՇԱՆՋԱՂԷ-
ՑԻ ՄԿՐՏԻ-
ՉԻ ՈՐԴԻ
ՅԱՐՈՒԹ[ԻՒՆԻ]Ն:
ԹՎԻՆ ՌՃՁ (1731):

*Հրատ.* Ղաֆադարյան, Հաղբատ, 258:

**470. ՏԱՊԱՆԱՔԱՐ**. Նույն տեղում, 4 տող.



Ի ԹՈՒ[ԻՍ] ՈԽԲ (1193):
ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ Է ՀՈ-
ԳԵԼԻՑ ՎԱՐԴԱՊԵ-
ՏԻՆ ՎԱՐԴԱՆԱ:

*Հրատ.* Ղաֆադարյան, Հաղբատ, 259:

## ԱՆԱՊԱՏ ԵԿԵՂԵՑԻ

*471. ԱՆԱՊԱՏԻ ԵԿԵՂԵՑԻ*. մուտքի ճակատակալ քարին, 12 տող.



Ի ԹՎ[ԻՆ] ՌՃԻԵ: (1676):
ԲԱՐԵՀՊԱՇՏՆ ԱՋ[Ա]Տ ԱԶԳԱՑ ԵԿՈՒԼԻՆՑ ՄԵԾԱ-
ՀԱՒ[Ա]Տ ՋԱԼՆ, ՈՐԴԻ Շ[Ա]ՀՂՈՒԼՈՒՆԻ՝ ՈՂՈՐՄԱԾ ԱՄՈՒՍՆԱՒ
ԻՒՐՈՎ, Վ[Ե]ՐԸՍՏԻՆ ՆՈՐՈԳԵԱՑ ՏԱՃ[Ա]Ր ՏԻՐԱՄՕՐՆ ԲԱՐԵՀԽՈՍ Ի[Ւ]-
Ր[ԵԱ]ՆՑ ԵՒ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԻ[ՒՆ] ՈՐԴՈՑ ԻՒՐ[ԵԱ]ՆՑ, ՆՆՋԵՑԵԼՈՑ ԵՒ ԿԵՆԴԱՆԵ[ԱՑ]
Ի ՄԻՇՏ ՅԻՇԻՆ: ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ[ԱՆ] ԱՒԵՏԻՍ ԵՊ[Ի]ՍԿ[ՈՊՈՍ]Ի, ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁ-
ՈՒԹ[ԵԱՄ]Բ
Մ[Ա]ՐԳԻՍ
ԿՐՕՆԱՒ[Ո]-
ՐԻ [ԵՒ]
ՏՐ ԲԱՐ-
Մ[Ե]Ղ[Ի]:

*Հրատ.* Դրիմեցի, 36, Ջալալյանց, Ա, 77, Երզնկյան, 64, «Ազգ. հանդ.», VII-VIII, 413, ՎՏ, 193, Ղաֆադարյան, Հաղբատ, 244:

*Ծանոթ.* Ժողովրդի մեջ տարածված են այս եկեղեցու ***Անապատ*** կամ ***Կուսանց անապատ*** անունները, որոնք գրավոր չեն ավանդված և ոչ էլ հայտնի է, որ Հաղբատում կույսեր են ապրել (Կ. Ղ.), ինչպես Ախթալայում, Խուճապում: Հավանաբար այդպես է կոչվել աչքից հեռու լինելու պատճառով: Իսկ ուշ շրջանի արձանագրության մեջ գմբեթավոր այս փոքր եկեղեցին կոչվում է ***Տիրամոր տաճար,*** այսինքն Աստվածածին: Եվ քանի որ այս անունը կրող սրբարանները շատ են, ուստի հարմար գտնվեց պահել տարածված անունը՝ այլոց հետ չշփոթելու համար:

*472.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ.*** եկեղեցու հարավային կողմում, 10 տող.



ԹՎ[ԻՆ] Ռ-
ԾԸ (1609):
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Ս-
ԱՐԳԻՍ ՎԱՐԴ
ԱՅՊԵՏԻՆ Ա-
ՁԳԱԻ ԽՈՑ-
ԻԿԵՑԻ ԵԻ Ն-
ՈՐՈԳՈՂ ՍԲ
ԵԿԵՂԵՑՈ-
ՅՍ:

*Հրատ.* Ղրիմեցի. 36, Երզնկյան. 64, «Ազգ. հանդ.», VII-VIII, 413, ՎՏ, 194, Ղաֆադարյան, Հաղբատ, 245:

***Ծանոթ.*** Ժէդ. վանական շինությունները բազմիցս ենթարկվել են նորոգումների: Այդ մասին հիշատակությունները կարելի է բաժանել երկու մասի: Առաջինը եկեղեցու պատին փորագրված պաշտոնական վավերագիրն է, որտեղ արձանագրված է շինարարության փաստը որպես կարևոր իրադարձություն, երկրորդը՝ տեղեկություններն են (մեծ մասամբ՝ տապանագրեր) միջոցներ տրամադրողների և ճարտարապետների մասին: Ահա այս երկրորդ խմբի մեջ է այս տապանաքարը, ըստ որի Ս. Անապատ եկեղեցու նորոգմանը նպաստավորել է Սարգիս վարդապետը: Հին հրատարակիչները «մեկը մյուսից արտագրելով արձանագրության թվականը՝ կարդացել են ՌճԵ 1681» (Կ. Ղ.):

*473.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ.*** օրորոցաձև, երեք միանման խաչքարերից կենտրոնականի առաջ, 3 տող (ԺԳ դ.).



ԱՅՍ Է ՀԱՆ-
ԳԻՍՏ ՏՆ ՅՈ-
ՀԱՆԻՍԻ:

*Հրատ.* Ղրիմեցի. 43, Երզնկյան. 69, «Ազգ. հանդ.», VII-VIII, 414, Ղաֆադարյան, Հաղբատ, 245:

***Ծանոթ.*** Կ. Ղաֆադարյանի ենթադրությամբ՝ սա վանքի առաջնորդներից է և եկեղեցու հարավային թևի երեք խաչքարերից կենտրոնականը կանգնեցված է նրա գերեզմանին:

***474. ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** օրորոցաձև, նախորդի հարավային կողքին, 3 տող.



ԱՅՍ Է ՀԱՆ-
ԳԻՍՏ ՏՆ ԳԵ-
ՈՐԳԱ:

*Հրատ.* Ղրիմեցի, 43, Երզնկյան, 64, Ազգ. հանդ., VII-VIII, 414. Ղաֆադարյան, Հաղբատ, 246:

***Ծանոթ.*** Սա ևս, հավանաբար, եղել է վանքի առաջնորդը, և խաչքարն էլ կանգնեցված է նրա հիշատակին:

***475. ԱՆԱՊԱՏԻ ԵԿԵՂԵՑԻ,*** արևմտյան մուտքի շրջանակի վրա, 7 տող.



ՆՈՐՈԳԵ-
ՑԱՒ ՁԵՌ-
ԱՒՔԸՆ ՈՒ-
ՍՏԱՅ
ՆԱՒԱՅ-
ՍԱՐԴ⌊ԻՆ⌋, ՈՐ
Ց.....

*Հրատ.* Ղաֆադարյան, Հաղբատ, 259:

***Ծանոթ.*** Նավասարդը առնջեցի է, դարի նշանավոր ճարտարապետներից, որը 1656 թ. նորոգել է նաև Ս. Նշան եկեղեցին, սրահը, Զանգակատունը:

***476. ՍԱԼԱՍՏԱՊԱՆ.*** Անապատի եկեղեցու առաջ, չորս եզրերին.



ԱՐՁԱՆՍ ԱՅՍ ՍԵՄ-
ԱԿԱՆ Է՛ ՍՈՓԵՍՏՈՍԻ ՏՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ, ԿԱԶՄԵԱԼ Ի ՅՈՀ-
ԱՆՆԵՍԻ ՔՎԵՐՈՐԴՈ
ԻՒՐՈՅ: ՈՀԴ: (1225): ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ Վ⌊Ա⌋Ս⌊Ն⌋ ՏՆ:

*Հրատ.* Ղրիմեցի, 36. «Արձագանք», 1884, 629, Երզնկյան, 65, «Ազգ. հանդ.», VII-VIII, 414. ՎՏ, 69, Ղաֆադարյան, Հաղբատ, 259:

***477. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐ,*** նախորդի մոտ, 1 տող (ԺԳ դ.).



ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԻԳՆԱՏԻՈՍԻ ⌊Է⌋ ՏԱՊԱՆՍ: ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ՝ ՅԱՂԱՒԹՍ Յ⌊ԻՇԵՑԷՔ⌋

*Հրատ.* Ղաֆադարյան, Հաղբատ, 259: